ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ՄԻՍԱԿԱՆԻՑ ԳՊՐԵՎԱՆՈՒՑ ԱՐՄԱՇՈՒ

ՏԱՐԻ 45 ԹԻՒ 4

22 ՅՈՒՆՈՒՍ 1896

ՊԱՏՄԱՆԵՍ ՊԱՏԱՐԱԳԱԳՐՈՒԹԵԱՆ

Տարեկան ..... 40 Դուրուշ
Վեցամսեայ ..... 20 »
Թղթատարուն եան ծախք տարեկան 10 »

Հատուկ ՄԷԿ Դուրուշ

Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. ԱԲԵՒԵԼԸ Էրազրոյ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՇԻՐԱԿԱՑԻՆ ԵՐԱԶԸ ..... Ե. Վ. ԴՈՒՐԵԱՆ
ՀԱՇՇՈՒ ԱՒԵՏԱՐԱՆ .... ՄՈՒՇԵՂ Վ.
ՀԻՒԴԱՀԱՄԱՐ .... Մ. Ե. Օ.
ՍԱՂՄՈՍ .... ՍՄԲԱՏ Վ.
ԱՌԱՐԵԱԼՆԵՐԸ .... ԲԱԲԳԷՆ Վ.
ԳԱՂՑՈՒԱԾՔ .... Ճ. ՏԱՐՄԷՍԴԷՐ
ԱԶԳԱՑԻՆ ԵՒ ԳԱՂԱՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Բաժանորդագրութեանց, ծանուցմանց եւ այլ մանրամասնութեանց համար դիմել առ

Տնօրէնութիւն ԱՐԵՒԵԱԳ Լրագրոյ

Ղալաթիա, Նորատունկեան—Խան

Նիկոմիդիոյ գործակալն է Մինաս Էֆէնտի Աշճեան, որ միանգամայն Դպրեվանուց գործակալն է։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՔ

Թէ՛ մայրաքաղաքիս եւ թէ գաւառաց համար բաժանորդագինք կանխիկ կը վճարուին։

Բաժանորդագրութիւնք կ'սկսին իւրաքանչիւր ամսոյ 1 ին կամ 15 ին։

ՄԱՍԻՍ

ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԽԵ. ՏԱՐԻ 22 ՅՈՒՆԻՍ 1896 ԹԻՒ 4

ՇԻՐԱԿԱՑԻԻՆ ԵՐԱՁԸ

Բանաստեղծներու ծանօթ է Անանիա Շիրակացիին անունը՝ որ է. դարու գիտնական Հայ եկեղեցականներէն մին է։ Իր ուսումն ըրած է Տրապիզոնի մէջ՝ ժամանակին նշանաւոր յոյն վարդապետներէն Տիւքիկոսի ձեռքին տակ՝ որ լաւ հայերէն ալ գիտէր։ Անոր ունեցած այս առաւելութենէն օգտուելով Շիրակացին՝ անշուշտ կանուխ կրցաւ զարդանալ յունարէն լեզուի մէջ, և արտաքին գիտութեանց համար ալ հաւասարապէս զօրանալ։

Ութամեայ շրջանով հետեւեցաւ Շիրակացին ուսումնական այն ծրագրին՝ որ Փոլէմ Գէրսոնիէանց ամփոփումն էր, այսինքն Թուաբանութեան, Երկրաչափութեան, Աստղաբաշխութեան և Երաժշտութեան։ Յետոյ եկաւ իր բնագաւառը, ուր բազմաթիւ ուսանողներ ժողվեց իր շուրջը, սակայն անոնք երկարժամանակեայ աշխատութեան մը շրջանը դեռ չ'աւարտած՝ մէկիկ մէկիկ ցրուեցան իր քովէն, վասն զի ժամ

առաջ Հաբեթի կոչուելու տենդը բռնած էր զիրենք, ու մտաւոր զբաղումներն չկրցան դարման մ'ըլլալ ա՛յն ճանճրոյթին՝ որ իրենց ջիղերը կ'խզրատէր։ Շիրակացին այն օրէն սա տխուր գաղափարն ունեցաւ՝ թէ «Հայերն խմաստ և դիտութիւն չեն սիրեր, այլ ծոյլ են ու ճանճրացող»։

Մենք հոս նպատակ չունինք ցոյց տալու թէ ի՞նչ էր խկապէս Շիրակացիին ունեցած դիտութեան արժէքը, և ո՛չ ալ դատապարտելու՝ տասնեակ տարիներու չրջանէ մը վախչող ուսանողներու անհամբերութիւնը, որոնք՝ միւս կողմանէ՝ պարսաւանքով ալ խօսիլ չկրցին իրենց վարդապետին նկատմամբ, ինչպէս ինքը կը դանդատի։ Բաւական կ'սեպենք միայն պատմել իր Եր.ը՝ որ դիտնական հանդամանք մ'ունի դէթ ա՛յնչափ՝ որչափ կրնայ ունենալ մոռածութիւններն առարկայացնող երազ մը։

Այնպիսի դարու մը մէջ՝ յորում ընդունուած դիտական ծանօթութիւններու սահմանէն դուրս բան մը խորհիլը կամ խօսիլն այլափոխ-ՐԷԱՆ հետ չա՞տ շուտով կրնար շփոթիլ, միտքերու այն կրաւորական վիճակին մէջ՝ յորում լաւագոյն ողջմտութիւնն էր խնդիր չյուզել կամ չհետազօտել՝ թէ ի՞նչ բանի վրայ դրուած են արդեօք երկրին հիմերը, «Զի այս և ասոնց նման խնդիրներն, ինչպէս կը գրէր երբեմն Ս. Բարսեղ (Վեցօրէք. Ճ.-ա), կրնային ցնորեցնել միտքն ու խմացականութիւնը և ճշմարտութենէ հեռանալու պատճառ ըլլալ»։ Այո՛, այդպիսի դարու մէջ Շիրակացին չ'էր դադրեր իր ուղեղն այդ հարցերով տանջելէ, թէպէտ և անբաւական մնաց քայլ մը առաջ տանելու իր ժամանակին դիտութեան ընթացքը։

Եկեղեցւոյ հայրերուն մէջ հերքման նիւթ եղած կարեւորագոյն հարցերէն մին ալ սա էր՝ թէ հակոդոնէայներ կայի՞ն արդեօք, այսինքն՝ երկրին թէ՛ վրան և թէ՛ տակը (հասարակ բացատրութեան մը համեմատ) բնակիչներ կամ կենդանիներ ունի. կ'գտնուէ՞ն. — այս խնդրին զոյգ կ'ընթանար նաեւ երկրին դնդաձեւութիւնը —։ Արդ՝ Շիրակացին խօսելու ատեն հակոտնեաներու նկատմամբ, (Աստղաբաշխութիւն, յաղագս Երկ.) նախ արտաքին փիլիսոփաներու կարծիքներն յառաջ կ'բերէ, որոնք կ'վարդապետէին՝ թէ ինչպէս ճանճերը խնձորի մը շուրջն՝ այնպէս են մարդիկ ալ երկրին բոլորտիքը ելլն. ապա կ'ջրէ այդ ենթադրութիւններն իբրեւ Դեմ ոնմպու-

ՌիՔ—Ն , և Աստուածաշունչ մատեանին իբր հակառակ տեսութիւններ։ Բայց յետոյ անմիջապէս՝ այդ նիւթին վերաբերմամբ իր երբեմն ունեցած տարակուսանքը միամտութեամբ կ'խոստովանի ըսելով. «Պէտք է որ յայտնեմ ձեզի թէ այս խնդրին համար ես տարակոյսներ ունեցայ , թէպէտ և մարգարէներէն՝ Աստուածաշունչէն և Եկեղեցւոյ վարդապետներէն ուսած էի թէ հակոռնէայներ չկան . սակայն ինծի շատ հաւանական կ'երեւէր անոնց դոյութիւնը , և իմ այս մտածումիս անհամաձայն չէի նկատեր Աստուածաշունչ գիրքը։ — Պատմէ՞ Շիրակացին ; որ մանքին առաջին կապանքը պիտի յաջողէր քակել՝ եթէ ուրիշ խորհրդաւոր հանգոյցներ զինքը չկաշկանդէին։ Հետագայ դարերուն մէջ՝ մեծ դժուարութեամբ և երկարատեւ պայքարներով վերջնականապէս լուծում գտած այդ խնդիրը կանուխէն պիտի կրնա՞ր ուրեմն առեղծել Շիրակացին՝ Աստուածաշունչի և գիտութեան մէջ համաձայնութիւն մը ենթադրելով , թէպէտ և դժբախտաբար մեզի անծանօթ մնացած են իր այն ձեռնարկութիւնները՝ որոնցմով այդ հաշտութիւնը կ'կարծէր իրական ընել։ Երբեմն մը սակայն բաւական եղաւ իր խորհուրդներն խախտելու . ահա ինչ որ կ'պատմէ ինքը . «Մի՛ եպերէք դիս , սիրելիներ , ծածկագիտը գիտէ թէ չեմ տեր։ Առաւօտ մը ժամերգութեան տեսն՝ երբ Ս. Եւդինէոսի վկայարանին մէջ (ի Տրապիզոն) կ'աղօթէի , և այս մտածումով միտքս կ'ծփար , քունը վրաս ծանրացաւ։ Երազիս մէջ կ'տեսնէի՝ թէ արեւը ծագած պահուն դէպ ի երկիր կ'ինջնէր . յառաջ փայլեցի և գրկեցի զայն . ոսկի մազերով՝ անմօրուս պատանի մ'էր նա , և շրթունքներն ալ ոսկեգոյն . ճերմակ ու փայլուն հանդերձներ հագած էր , ու սաստիկ լոյս մը կ'ելնէր իր բերնէն։ Բայց իրեն՝ թէ շատո՞նց ի վեր փափաքս էր իրմէ բան մը լսել։ Օն ուրեմն , պատմէ՛ ինծի . երբ մեզմէ ծածկուիս դուն՝ որո՞ւ կ'երթաս լոյս տիրելու . երկրի տակ ուրիշ կենդանիներ կա՞ն թէ ո՛չ։ Նա պատասխանեց . Ո՛չ , այլ լեռներուն և ափերոյ ձորերուն ու անբնակ անձաւներուն լոյս կուտամ»։ — Խեղճ Շիրակացին արտմութեամբ արթնցաւ իր քունէն . ճիշդ չէ՛ր արեւուն պատասխանը , սուտ կ'խօսէր Հոմերոսեան Նո—ագին այն դիւցազնը «որ ամէն բան գիտէր և ամէն բան կ'տեսնէր»։ Բայց երազի մէջ երկնքի մեծ լուսաւորին տուած սուտ վկայութենէն յետոյ՝ արթնութեան մէջ

եկեղեցւոյն մեծ լուսաւորներէն մին համարուող վարդապետը (Տիւքիկոս) սխալ վկայութեամբ միևնոյն կարծիքը պիտի հաստատէր։ Շիրակացին սրտի յուզումով պատմեց իր երազը Տիւքիկոսին. — «Ինձի ի՞նչու չէիր հարցներ, ըսաւ յոյն վարդապետը, դժկամակելով անշուշտ որ հայ վարդապետը յանդուգն բաներ սկսած էր որոճալ իր մտքին մէջ. և չարիք մը խլելու փութկոտութեամբ՝ վար առնել տուաւ Ամիկոքոսի Յոբայ Դէնոռ-Ի-Նը. բացաւ զայն, ու ցոյց տալով անոր մէջէն մէկ երկու նշանակելի համարներու բացատրութիւնը՝ որ հակոդանէայներու ըմբռնումին հակառակ կ'ելնէին՝ լռեցուց Շիրակացին։ Մէկ վայրկենի մէջ՝ դէթ դէմյանդիմանութեան ուժով մոռցուած բան մը զոհ գնաց սա անխելք համոզումին թէ «սկսած էր հաւատալ մեծ վարդապետին ու անոր նմաններուն»։ Կ'երեւի թէ նոյն օրը երկրաչարժի խնդիրն ալ միջադէպ մ'եղաւ, սակայն Սաղմոսին մէկ բանաստեղծական տողովը ա՛յն ալ գտաւ իր լուծումը Տիւքիկոսի բերնին մէջ. «Ո հայի յերկիր և տայ դողալ սմա» (Սաղմ. ՃԳ. 32). — Շիրակացին ալ պահ մը դողաց . . . յաղթութիւնը Տիւքիկոսի կողմն էր։

Սխալ իմացուած հեղինակութիւններ ո՞րչափ կ'ծայրատեն միտքը։ Եթէ Շիրակացին ծնած ըլլար այնպիսի միջավայրի մը մէջ՝ ուր փոխանակ արեւը Եբոպէլո՝ կարենար գոնէ զայն, Տրապիզոնի Ս. Եւդիկիոսը ո՛չ նուազ նշանաւոր պիտի ըլլար իրմով՝ որչափ եղաւ Պիսայի եկեղեցին Գալիլէոսով։

Հակոդանէայնե՞ր ենթադրել վարի կողմը երկրին՝ որ չաւերու համար Մովսէսի չինած տապանակին ձեւն ունէր՝ վտանգաւոր էր արդարեւ, ինչպէս ըսինք, և դայթակղեցուցիչ՝ պարզ հաւատացեալի մը համար։ Նոյնպէս երկրին գնդաձեւութիւնը պաշտպանող փիլիսոփաներն իսկ Բիբլիներու կարգը դասել՝ նուազ անխոհեմ յայտարարութիւն չէր՝ ինչպէս համարձակեցաւ ընել Շիրակացին։ Չէ՞ մի որ այդ ամենուն պատասխանը տուած էր արդէն Լակտանտիոս. «Անոնք որ հակոտնեայներու դոյութիւնը կ'պնդեն, կ'գրէր նա իր Աստուածային Սահմանադրութիւնի գործին մէջ, խելք ունի՞ն արդեօք։ Ո՞վ կրնայ համոզուիլ որ ոտքերնին վեր ու գլուխնին վար մարդեր կան, կամ թէ ամէն ինչ որ կեցած է հոս՝ հոն կախուած ըլլայ, կամ անձրեւն ու կարկուտը վեր ելնելով

խնան . . . ալ ի՞նչ հարկ դարմանալու՝ թէ Բաբելոն իր կախաղանաւոր բուրաստաններն ունեցաւ՝ որոնք աշխարհի հրաշալիքներէն մին էին, քանի որ փիլիսոփաներն ծովեր՝ քաղաքներ ու լեռներ կ'կախեն»։ Օգոստինոսն ալ նոյն բանը կրկնեց տարբեր բացատրութիւններով. իսկ Գազայի Պրոկոպիոս եպիսկոպոսն (Զ. դար) աւելի հանճարեղ ձեռնարկ մը դուռ հակոտնեայներու դոյութիւնն՝ ինչպէս նաեւ երկրի գնդաձեւութիւնը մերժելու համար. «Եթէ հակոտնեայներ գտնուէին, կ'ըսէր նա, պէտք էր որ Յիսուս Քրիստոս անո՛նց ալ երթար» (!)։

Շիրակացիէն հազիւ դար մը վերջը՝ իղլանտացի երէց մը հակոտնեայներու կարծիքին մէջ այլ ընդ այլոյ ենթադրութիւններ ալ մուծելով՝ պաշտպանեց զայն, բայց Պոնփիակիոսի թելադրութեամբ քիչ մնաց որ Պապը եկեղեցական բոլոր պատիւներէն զրկէր զինքը։ Ուրիշներ ալ յետոյ իրենց կասկածելիներ իրենց հաւատքին մէջ՝ այդ խնդրին վերաբերմամբ դատապարտութենէ ազատ չկրցան մնալ։

Դպրոցական փիլիսոփայութեան ժամանակամիջոցին՝ գիտական այսօրինակ վէճեր՝ որոնք Սուրբ Գրքին յայտնապէս հակառակ ըլլալու բնութիւնն այլ եւս չունէին, տակաւ դադրեցան մահ սպառնացող վտանգներ ըլլալէ։ Մեծն Ալբերդ (ԺԳ դար) ընդունեցաւ հակոտնեայներու դոյութիւնը՝ թէպէտ և իր կարծիքին դէմ ուժգին գինուեցան Ծիրանաւորն Տ'Ակվին և եպիսկոպոսն Տոստատ, հիմնուելով Ս. Պօղոսի առ Հռովմայեցիս թուղթին Ժ. Գլ. 18 համարին վրայ. «Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա (աւետարանչաց) և ընդ ծագս տիեզերաց խօսք նոցա». ու կ'ասէին՝ թէ կարելի չէր որ ա՛յսպէս ըլլար, այսինքն՝ մինչեւ տիեզերքին ծայրերն աւետարանիչներու խօսքը հնա՛ր չէր որ տարածուէր՝ եթէ հակոտնեայներ գտնուէին։

Այս ամէն սնոտի ու ըմահամ առարկութիւններուն ջախջախիչ հերքումը տուին աշխարհի շուրջը կատարուած ճամբորդութիւններն և տիեզերագրական գիւտերը։

Վա՜խ որ մեր հանճարեղ Շիրակացին իր արեւափառ երազէն խաբուեցաւ. Տիւքիկոսի աւանդական ազդեցութեան լուծը կրող այդ հոգի մտքը՝ տարակոյս չկայ թէ եւրոպական գիտութեան մէջ զուգընթացիկ շարժման հաղորդ պիտի կըր-

նար ընել զմեզ՝ եթէ Լինցի Գիմնասիոնին մէջ աշակերտած ըլլար Գէրլիէրի մը։

Սակայն՝ ենթադրելով պահ մը թէ այդպիսի պատրաստութեամբ ներկուռ՝ աշակերտել ուզած ըլլար Շիրակացին իր շուրջը հաւաքուողները, կրնայի՞նք վստահ ըլլալ թէ անոնք պիտի չցրուէին իր քովէն մէկիկ մէկիկ, կամ իրենց հասարակ պարտաւորութիւններուն հետ պիտի չխառնէին նաեւ կրօնական ամբաստանութեան մը մոլեռանդ գանգատները . . . ։ Ո՛չ, ո՛չ, «Ֆայլերն ու Ֆանֆրացոպոնէրը» որոնք Ռաբբի կոչուելու տենդէն բռնուած՝ կ'արհամարհեն խմասոպ և գիպոՒրի՝ն, միշտ միևնոյն դատապարտութիւնը պիտի կրէին Շիրակացիէն, թէ իսկ անոր Երապը տեսակ մը յայպոՒրի՝ն ուզէին մեկնել . . . ։

Ե. Վ. ԴՈՒՐԵԱՆ

ՃԱՇՈՒ ԱՒԵՏԱՐԱՆ

ՀԻՆԳ ՀԱՑԵՐՔ

ՄԱՏԹ. ԺԴ. 13—21

«Եւ իբրեւ լուաւ Յիսուս, գնաց անտի նաւու յանապատ տեղի առանձինն».

Տասներկուքներն դարձած էին իրենց առաքելական բարոզութենէն։ Տակաւին առաջին անգամ կատարած ըլլալով այդ պաշտօնը, իրենց ունեցած զոյգն յաջողութիւններն անգամ ուրախութեան զեղումով մը լեցուցած էին զիրենք։ Քրիստոս տեսաւ այդ պարտասած առաքեալները, որոնք հանգիստի պէտք ունէին։ Հարկ էր պահ մը թողուլ ամբոխը, եւ առանձինն ի՛ր աշակերտներով զբաղիլ։ Մեր ընտիրը կ'աւանդէ, թէ Յիսուս եւ աշակերտներն նաւով գնացին «յանապատ տեղի»։ Ղուկաս տեղական մանրամասնութիւն մ'ունի այս առթիւ, եւ կ'ըսէ

թէ գնացին «ի տեղի անապատ քաղաքի միոյ, որում անուն էր Բեթսայիդա» (Ղուկ. Թ. 10)։ — Քրիստոսի ժամանակ, Բեթսայիթա անունով երկու քաղաքներ կային. մին Բեթսայիդա Գալիլիոյ, հայրենիք Փիլիպպոս առաքելոյն (Յովհ. ԺԲ. 21), եւ միւսը՝ զոր կ'յիշատակէ Յովսեպոս պատմիչ, Բեթսայիդա-Յուլիա։ Փիլիպպոս չորրորդապետ հիմնեց այս վերջին Բեթսայիդան, ի պատիւ Օգոստոսի դստեր՝ Յուլիայ։ Բեթսայիդա-Յուլիայի «անապատ»ին մէջ տեղի ունեցաւ հինգ հացերու բազմացումին հրաշքը։

«Իբրեւ լուան ժողովուրդքն, գնացին զհետ նորա հետի ի քաղաքաց անտի»։

Յիսուսի մեկնումը դէպ ի Բեդսայիդա-Յուլիա լուեցաւ ամէն կողմէ։ Անոնք որ քիչ յառաջ զինքը կ'շրջապատէին, այժմ հետիոտս շրջան կ'ընեն Տիբերեայ լճին եզերքէն, նորէն վայելելու համար նոր Մարգարէն, որուն բարոյական օծանուտ բացատրութիւններն եւ դէպ ի ամբոխն ունեցած զգուշութիւնը, երախտագիտութեան անհուն զգացում մը արթնցուցած էին անոնց մէջ. եւ միշտ զինքը լսելու անյագ տենչ մը։ Այս պատճառաւ իր առանձնութեան լուռ վայրկեաններն անգամ ստիպուած էր նուիրելու տառապող մարդկութիւն մը փրկելու գործին։ Իր քայլերուն ետեւէն շարունակ հետաքրքիր ու ծարաւի ամբոխ մը կ'երկարէր. կանգ առնելու համար բլուրի մը ստորոտը կամ լճին եզերքը մտիկ ընելու աւետարանական ճշմարտութիւնը, եւ Աստուծոյ արքայութիւնը տեսնելու՝ իր պատշաճաւոր վայելչութեամբը։

«Եւ իբրեւ ել, ետես ժողովուրդ բազում, գթացաւ ի նոսա, եւ բժշկեաց զիւանդս նոցա»։

Յիսուս դեռ նոր բլուրն ի վեր կ'բարձրանար, եւ ահա բազմաթիւ խումբ մը ժողովուրդներու հասած էր իրեն։ Աչքը դարձուց այդ ալեկոծ ժողովուրդին վրայ, գթութեան ու արշահատանքի զգացումը խորապէս ցնցեց զինքն ի տես այդ ամբոխին, որուն բարոյական թշուառութիւնը ահարկու հանգամանք մ'էր առած անհովիւ հօտ մը ոչխարներու, որոնց մէջ հիւանդութիւնը ճարակած էր, կեղեքող վէրքերու այրումով։ Առանձնանալու պէտքը տեղի տուաւ գթութեան զգացումին։ Աստուածային վարդապետը իր անսահման բարութեամբն ընդունեց եռացող ամբոխը։ Կարեկցութեան զգացումին հետ ծնունդ առաւ բարոզելու պէտքը։ Քարոզն ու բժշկութիւնները՝ կատարուած՝ հիւանդներուն վրայ, մոռցնել տուած էին ժողովուրդին, թէ օրը կ'տարաժամէր, եւ իրենք անապատին մէջ կ'գտնուէին։ Քրիստոսի առաքելութեան համար նպատակայարմար էր այդ առանձնակ զուարը, եւ փութկոտ հասարակութիւնը՝ որ մտիկ կ'ընէր իրեն։ Արեւը խոնարհած էր արդէն եւ իրիկուան մթնշաղի լուռ անդորրութեան մէջ Աստուծոյ Որդւոյն բարբառն էր որ կ'հնչէր բլուրին բարձունքէն։ Աս-

տուծոյ արքայութեան խորհուրդը կ'լայնէր ժողովուրդին բաբանող սիրտը, աչքերն արցունքով ուռած էին, եւ Քրիստոսի ծայնը կ'արձագանգէր մերձակայ վայրերէն։ Երեկոյեան խորհրդաւոր լռութիւնը կը խզուէր բարոզի ծայնէն եւ բժշկուածներուն հառաչանքներէն, որոնք իրարու հետ խառնուած, անապատին մէջ կրօնի եւ հաւատքի ներդաշնակաւոր մեղեդին կ'յօրինէին։

Առաքեալները միայն անհանգիստ երեւոյթ մ'ունին- վերահաս գիշերը, անապատ տեղը եւ ամբոխին նօթութիւնը մտածել տուին իրենց վերջապէս - Քրիստոսի մօտեցան ու ըսին անոր։

«Տեղիս ա ապատ է եւ օրս տարաժամեալ։ արձակեա զժողովուրդսդ, զի երթիցեն շուրջ ի շէնսն, զնեսցեն իւրեանց կերակուրս»։

Ինքն ալ կ'զգար, թէ ամբոխը, որ խռնուած էր իր շուրջ, անօթի էր ու ծարաւի մնացեր մայն։ Ու այդ նօթութեան եւ ծարաւին մէջ բարոյականը ու նիւթականը զէմ յանդիման կուգային իրարու։ Ժողովուրդն ալ իր այդ հրապուրանքին մէջ, կարծես անզգալապէս եւ ներքին բերումով մը այն հարցումը կազմած էր, թէ «ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ»։

Իրաւունք ունէին սակայն Առաքեալներն։ Անօթութիւնը, գիշերուան մութէն եւ անապատի միայնութենէն աւելի սոսկում կ'առթէր մտքերու։ Միւս կողմանէ, ինքն իսկ Տէրն մեր Յիսուս Քրիստոս ալ իրաւունք ունէր ըսելու իրեններուն։

«Ոչ ինչ պիտոյ է դոցա երթալ։ դուք տուք դոցա ուտել»։

Մեծ եղաւ զարմացումը առաքեալներուն, իրենց Տիրոջ այս հրամանին հանդէպ։ Յովհաննէս Աւետարանիչ, այնպէս կ'նկարագրէ Բեդսայիդայի անապատին այդ տեսարանը, իբր թէ առաքելոց (եւ ժողովուրդին) հաւատքը զօրացնելու փորձ մ'ըլլար այն։ Որովհետեւ ըստ իւր պատմութեան (Ե. 5—14) Յիսուս նախ եւ առաջ կ'զիմէ իրեններուն, հացի պատրաստութեան համար. եւ յայտնապէս կ'ըսէ Աւետարանիչն, թէ «զայս ասէր փորձելով զնա (զՓիլիպպոս), զի ինքն գիտէր զի՛ նչ առնելոցն էր» (Ե. 6)։ Ժողովուրդը կերակրելու անհրաժեշտ պէտքը արդէն մտածումի առարկայ եղած էր Քրիստոսի, նոյն օրուան բարոյութեան պահուն։ Յովհաննէս կրցաւ կարդալ զայն իր վարդապետին սրտին խորը։

Քրիստոս իր այդ առաջարկով նիւթ կ'մատակարարէ իրեններուն, որպէս զի հաւատքի եւ յոյսի արտայայտութիւն մ'ընեն, այլ սակայն անոնցմէ եւ ո՛չ մին կրցաւ ըսել անոր, թէ ինքը կրնար ամէն բան ընել, իր աստուածային կարողութեամբը, ամբոխին ուտելիք հայթայթելու համար։ Այն կրկնուած հարցումներն, զորս կ'տեսնենք Յովհա-

նու Աւետարանին մէջ. ամէնքն ալ կ'հաստատեն եւ համոզում կազմել կուտան առաքեալներուն, իրենց անկարողութեան զգացումին վրայ։ Փիլիպպոսի միամիտ պարզութիւնը վարանոտ նկարագիր մ'առած էր երբ Անդրէաս լուր կ'բերէ, թէ ամբոխին մէջ կայ պատանի մը, որ հինգ նկանակ ունի զարեղէն, եւ երկու ձկներ միայն։

«Եւ հրամայեաց բազմեցուցանել զժողովուրդսն ի վերայ խոտոյ»։

Մարգերուն դալարը, ծաղիկներու գոյներով շարահիւսուած, բնութեան ընդարձակ գորգը յօրինած էին Բեթսայիդայի բլուրներուն ստորոտը։ Քրիստոս կ'հրամայէ իրենցերուն կարգ կարգ բազմեցնել ներկայ հինգ հազարներն այն դալար խոտին վրայ։ Ամեն որ տենդոտ հիացմամբ կ'սպասէր տեսնել այդ արարուածին վախճանը եւ ահա Յիսուս

«Առեալ զհինգ նկանակն եւ զերկուս ձկունս՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց եւ եբեկ եւ ետ ցաշակերտսն զնկանակսն»։

Յիսուսի գլուխ նայուածքը սուզուեցաւ երկնքի անհունին մէջ, աղօթքի բառերը դուրս կ'թռէին իր սուրբ շրթներէն. հացերը կը բազմանային շարունակ, պատրաստելու համար աստուածային սեղանը, որուն պիտի հրաւիրուէր յետոյ ապա մարդկութիւնն ամբողջ։ Քիչ մը վերջ ամենքն ալ յագեցած էին. Առաքեալներն ու ժողովուրդը նոր ու չիտակից համոզում մը շինած էին Քրիստոսի աստուածային կաթողութեանը վրայ։ Քրիստոսի հաւատքը խորարմատ հիմնաւորեցաւ ամենուն հոգւոյն խորը։

* * *

Բեթսայիդայի այս հացի բազմացումին առաջին հրաշքը պատմուած է չորս աւետարանիչներէն, շատ մը մանրամասնութիւններով։ Ականատես վկայից այս նկարագրութիւնը, մտածել կուտայ մեզի այն մեծ զուարթին վրայ, զոր Աստուած ցոյց կուտայ շարունակ մեզի։ Իբրեւ ստեղծողը մարդկութեան, Աստուած փոյթ ու խնամ կը տանի կերակրելու համար մարդը նոյն իսկ անապատին մէջ։ Բաւական է որ հաւատքի թեւերով բարձրանանք իրեն, եւ մաղթենք որ Յիսուս անգամ մ'ալ դէպ ի երկինք բարձրացնէ աչքերը եւ օրհնէ մեզի։

ՄԱՒՇԵՂ. Վ.

ՃԻԻԴԱՀԱՄԱՐ

Մարդկային սերունդը ծառի կը նմանի. ներքեւը միակ բուն մը կայ, որ միշտ կը բաժնուի եւ կը ճիւղաւորուի, այնպէս որ վերջ ի վերջոյ անհամար ծայրեր կը կազմէ, եւ ամենքն ալ միեւնոյն բունին հետ կապուած են։ Մարդն ալ ծնունդներով կը բազմանայ եւ կը հեռանայ, եւ որոնք որ նոյն բունէն առջեւ եկած են իրարու արիւնակից կը կոչուին, զի նոյն արիւնէ սերած են, ազգական ալ կը կոչուին, զի մի եւ նոյն ցեղի կը պատկանին։

Ազգականութիւնը կը վնասուի շատ բաներու համար, դոր օրինակ ժառանգութեան, յարաբերութեանց եւ ուրիշ խնդրոց համար. կը խնդրուի եւս ամուսնութեանց համար, վասն զի օրէնքը մերձաւորները իրարու ամուսնացնել կ'արգիլէ։

Այսուեղ կ'սկսին խնդիրներ, թէ ազգականներու ամուսնութեան արգելքին մէջ ի՞նչ կը հրամայէ բնական օրէնքը, ի՞նչ հրամայեց մովսիսական օրէնքը, ի՞նչ սահմանած է քրիստոնէական եկեղեցին, ի՞նչ կ'ըսեն քաղաքական օրէնքները։ Դարձեալ մինչեւ ո՞ւր է արգիլեալ ազգականութիւնը, ի՞նչ կանոն դրաւ հին Եկեղեցին, հին կանոնները փոփոխութիւն կրեցի՞ն արդեօք, եւ վերջապէս թէ ի՞նչ կանոնի կը հնազանդինք մեք այսօր. ինչպէս նաեւ թէ սովորական կանոնին բացառութիւններ արտօնելու իրաւունքն ի՞նչչափ է, եւ ո՞վ կրնայ շնորհել։

Ասոնց ամենքը կարեւոր եւ հետաքրքրական խնդիրներ են, բայց ներկայ յօդուածս անոնցմով պիտի չզբաղի, այլ պարզապէս մտադիր է ճիւղերը համրելու եւ ճշդելու դործածական եւ դիւրին ցուցակ մը տալ պաշտօնէից եւ հաստատելոց։

Մեր ցուցակը (Տես երես 112—113) հին և նոր գիրքերու տուած ձեւերէն տարբեր է. աւելի ընդարձակ է և կը կարծենք թէ աւելի ալ պարզ է։

Աղգականութեան չափը, կամ ճիւղահամարին աստիճանը ՀՈՒՆԴՆ է, զոր ռամկօրէն պրդ կը կոչենք. քանի հատ ծնունդ կայ՝ այնչափ ճիւղ, այնչափ պրդ, այնչափ աստիճան է։ Որ և իցէ անձ մը աղայ մը կ'ունենայ, երկուքին մէջ մէկ ծնունդ կայ, ուրեմն որդին հօրը հետ առաջին աստիճանի աղգական է։

Մեր ցուցակին մէջ որ և իցէ անձ մը ԻՆԲՆ բառով նշանակուած է, և ցուցակին ձախակողմեան անկիւնի տուփին մէջ դրուած է։ Նոյն գիծին վրայ հորիզոնական կերպով երմէ առաջ եկած ծնունդները կան. որք են կարդաւ 1. որդի, 2. թոռն, 3. թոռնորդի, 4. թոռընեայ՝ այսինքն է թոռան թոռ, 5. ձագթոռ, որ է որդւոյն թոռան թոռը, 6. ձագթոռնորդի, 7. ձագթոռնեայ։ Այստեղ կը կենանք վասն զի ամուսնութիւնը արդիլուած է մինչեւ եօթներորդ աստիճան։ Թէպէտ ուղիղ գիծին մէջ արգելքը աստիճան չունի, բայց երօք անհնարին է որ մէկ մը կարենայ եօթը ծնունդ երմէ հետու եղողին հետ յարաբերութիւն ունենալ։ Իրաքանչիւր աստիճան յատուկ տուփի մէջ է. արու և էգ զատուած չէ. վասն զի որդի և թոռ բառերը հասարակ են մանչուն ալ աղջկան ալ։

Նոյն ԻՆԲՆ տուփէն ուղղահայեաց կը բարձրանան դէպ ի վեր ծնունդներն, այսինքն են հայր և մայր, պապ և մամ, հաւ և հանի ևն. այստեղ դիւրութեան համար բառերը ուղեցինք ճշդել, հա- բառին պապ բառէն աւելի հեռաւոր ծնունդ տուինք. և նախ- բաղադրութիւններն աւելի հեռաւոր առինք քան պապ- բաղադրութիւնները։

Դէպ ի վայր (հորիզոնական) և դէպ ի վեր (ուղղահայեաց) ծնունդներուն մէջ սանդխաձեւ եռանկիւնի մէջ պարունակուած են բոլոր կողմնակի աղգականութիւն-

ներ. և հաւասար ատոիճանէ եղողներ մի և նոյն տուփի մէջ գրուած են, իսկ բառերն ալ ըստ ինքեան յայտնի ձեւերու վերածուած են, որ բացատրութեան կարօտ չլինին։

Իւրաքանչիւր տուփին մէջ թիւ մը կայ որ կը ցուցնէ նոյն տուփին մէջ նշանակուած ազգականին կեդրոնական ԻՆԲՆ տուփին հետ ունեցած ատոիճանը։

Տուփերը իրարու հետ կապուած են կցման գիծով մը. ամեն գիծ ծնունդ մը կը նշանակէ, և ազգականութեանց ճիւղերը գտնելու համար պէտք է միշտ միացընող գիծերու կարգով քալել, և քանի միջանկեալ գիծ կայ, այնչափ ծնունդ է, կամ պորտ է, կամ ազգականութեան ատոիճան է։

Հիմակ դանք ցուցակին դործածութեան կերպը բացատրել։

Երբոր երկու նշանակուելիքներ կան, բաւական է երկուքէն մէկը, ԻՆԲՆ տուփին վրայ ենթադրել, և յետոյ նայիլ թէ միւսը իր ինչն է. դտնել զայն կողմնակի տուփերուն մէջ, թիւը նայիլ. ազգականութեան ատոիճանն այն է։ Օրինակի համար մէկը կուզէ առնել իւր մեծ մօր եղբօր թոռը. ուղղը ԻՆԲՆ ենթադրելով վարէն չորրորդ տողին մէջ կը դտնեմք մամեղբօրթոռ, որուն վրայի թիւը 6 է։ Փորձով ալ ԻՆԲՆ տուփէն քալելով 6 ծնունդներ կամ 6 գիծեր կան, այսպէս՝

1. Հայր
2. Մամ
3. Հաւ
4. Մամեղբայր
5. Մամեղբօրորդի
6. Մամեղբօրթոռ

Այստեղ պէտք է դիտել տալ, թէ ազգականութեան մէջ արական կամ իգական գիծ տարբերութիւն չունին։

Նմանապէս տարբերութիւն չունի տղը կամ մեռածը։

Վերջապէս տարբերութիւն չունի եթէ հակադարձէն միւսը ինչն տուփին վրայ ենթադրուի, և առաջինը կողմնակի տուփերուն մէջ փնտռուի։

Աղգականութեան իսկութիւնը անխախտ կերպով կ'ենթադրէ, որ երկու անձերու դէպ ի վեր ծնունդները վերջ ի վերջոյ երթան և մի և նոյն անձի վրայ միաւորուին։ եթէ այս միաւորող անձը չկայ, աղգականութիւն ալ չկայ։

Մեր ցուցակը կը դործածուի նաեւ երբոր անձ մը իւր երկու աղգականներուն իրարու հետ ունեցած աստիճանը կ'ուզէ իմանալ։ Օրինակ իմն՝ կ'ուզեմ գիտնալ թէ մեծ մօրս քրոջ թոռան որդին հօրեղբօրս որդւոյն հետ ինչ աստիճան ունի։ Հօրեղբօրորդի վարէն երրորդ կարգին մէջ է, իսկ մամքոյրթոռնորդի չորրորդ կարգին վերջը։ Բաւական է տուփէ տուփ քալելով գիծերը համրել այսպէս, հօրեղբօրորդիէն սկսելով.

1. Հօրեղբայր
2. Մամ
3. Հաւ
4. Մամքոյր
5. Մամքուրորդի
6. Մամքոյրթոռ
7. Մամքոյրթոռնորդի

Ընդհանրապէս որ և է երկու տուփերուն հեռաւորութիւնը՝ մէկէն մէկալին հասնելու համար մէջտեղ դտնուող գիծերուն թիւին հաւասար է։

Մի և նոյն ցուցակը խնամութեան աստիճանները ճշդելու համար կը ծառայէ։ Խնամութիւնը կ'ենթադրէ երկու աղգականութիւն, կամ երկու արիւն՝ որոց մէջէն երկու անձ իրարու հետ ամուսնացած են։ Երբ երկու հոգի կ'ամուսնանան, մէկուն աղգականները հաւասար կերպով միւսին ալ աղգական կը դառնան, հարսին հօրեղբօրորդին փեսային ալ նոյն է, փեսային մօրեղբօրորդին հարսին ալ նոյն է։

ԺԻԻՂԱՀԱՄԱՐԻ ՑՈՒՑԱԿ

7 Նախահաւ Նախահանի						
6. Նախապապ Նախամամ	7. Ապուհաւեղբայր Ապուհաւքոյր Ապումամեղբայր Ապումամքոյր					
5. Ապուհաւ Ապուհանի	6. Ապուպապեղբայր Ապուպապքոյր Ապումամեղբայր Ապումամքոյր	7. Ապուպապեղբօրորդ Ապուպապքուրորդի Ապումամեղբօրորդի Ապումամքուրորդի				
4. Ապուպապ Ապումամ	5. Հաւեղբայր Հաւքոյր Հանեղբայր Հանիքոյր	6. Հաւեղբօրորդի Հաւքուրորդի Հանեղբօրորդի Հանքուրորդի	7. Հաւեղբօրհոռ Հաւքոյրհոռ Հանեղբօրհոռ Հանքոյրհոռ			
3. Հաւ Հանի	4. Պապեղբայր Պապքոյր Մամեղբայր Մամքոյր	5. Պապեղբօրորդի Պապքուրորդի Մամեղբօրորդի Մամքուրորդի	6. Պապեղբօրհոռ Պապքոյրհոռ Մամեղբօրհոռ Մամքոյրհոռ	7. Պապեղբօրհոռնորդ Պապքոյրհոռնորդի Մամեղբօրհոռնորդ Մամքոյրհոռնորդի		
2. Պապ Մամ	3. Հօրեղբայր Հօրաքոյր Մօրեղբայր Մօրաքոյր	4. Հօրեղբօրորդի Հօրքուրորդի Մօրեղբօրորդի Մօրքուրորդի	5. Հօրեղբօրհոռ Հօրքոյրհոռ Մօրեղբօրհոռ Մօրքոյրհոռ	6. Հօրեղբօրհոռնորդի Հօրքոյրհոռնորդի Մօրեղբօրհոռնորդի Մօրքոյրհոռնորդի	7. Հօրեղբօրհոռնեայ Հօրքոյրհոռնեայ Մօրեղբօրհոռնեայ Մօրքոյրհոռնեայ	
1. Հայր Մայր	2. Եղբայր Քոյր	3. Եղբօրորդի Քեռորդի	4. Եղբօրհոռ Քոյրհոռ	5. Եղբօրհոռնորդի Քոյրհոռնորդի	6. Եղբօրհոռնեայ Քոյրհոռնեայ	7. Եղբօրմագհոռ Քոյրմագհոռ
ԻՆՔՆ	1. Որդի	2. Թոռն	3. Թոռնորդի	4. Թոռնեայ	5. Ազգհոռ	6. Ազգհոռնորդի	7. Ազգհոռնեայ

Ուրեմն բաւական է որ խնամութեան արմատ եղող ամուսնացեալներէն նախ մէկը ԻՆՔՆ տուփին մէջ ենթադրուի, և իր ազգականը դնուի և թիւը առնուի, յետոյ ամուսնացեալներէն միւսը նոյն ԻՆՔՆ տուփին մէջ ենթադրուի, անոր ալ ազգականը դնուի և թիւը առնուի և եռքը երկու թիւերը դումարուին. խնամութեան աստիճանը այս դումարն է։ Օրինակի համար՝ կ'ուզէ կին մը իր մօրքրոջ թոռը, իր տալին աղջկան տալ։ Առաջ իր ազգականը ա՛ռ և մօրքոյրթոռը կը դանենք 5. տալոջ աղջիկը դանելու համար պիտի դնենք այրը ԻՆՔՆ տուփին մէջ և պիտի դանենք անոր քեռորդին որ է 3. դումարը կուտայ 8. այս է խնամութեան աստիճանը, և ըստ այնմ պիտի որոշուի թէ այդ ամուսնութիւնը կրնայ կատարուիլ։

Դիւրութեան համար աւելի աղէկ է խնամութեան բառերը, ընդօրինակ ընդանէ, կեսաւ, տալ, քենի և էն։ և էն. դանց ընել, և պարզապէս ազգականութեան բառերով հաշիւը դանել։ Այս ոճը բացատրութիւնն ալ կը պարզէ։

Մի և նոյն ցուցակը կնքահայրութեան համար ալ կը ծառայէ, մէկ անդամ պէտք է կնքահայրը ԻՆՔՆ տուփին մէջ դնել, և միւս անդամ ալ սանիկը. և երկուքին ազգականներուն թիւերը առնուլ, և իրարու հետ դումարել, և դումարին տուածը հոգեւոր ազգականութեան աստիճանն է։

Խորթութեան աստիճաններու մէջ ըստ ճիշդ օրինաց տարբերութիւն չկայ, վասն զի կամ հայր կամ մայր նոյն է, և արական և իգական կողմէ ալ աստիճանները հաւասար են։ Այսու հանդերձ երբ եղբայրներ հարազատ չեն, այսինքն միանգամայն համահայր և համամայր չեն, աստիճան մը աւելի կը համարուին հարազատութեան վրայ։ Իսկ եթէ ոչ համահայր են և ոչ ալ համամայր, այն ատեն ազգականութիւնը խնամութեան կը փոխուի։ Այսպէս երբ դաւակով այրի մարդ մը, զա-

ակ ունեցող այրի կին մը կ'առնու, առաջուընէ եղած զաւակները իրարու հետ ուրիշ կապ չունին բայց եթէ որ մէկուն հայրը միւսին մօրը հետ ամուսնացած է, ինչպէս մէկուն եղբայրը կրնար միւսին քրոջ հետ ամուսնացած ըլլալ։ Ամուսնանի մէջ տարբերութիւն չմնաներ, և այս տեղ ալ խորթութեան հիման վրայ ամուսնան մը աւելի համրելու սովորութիւն կայ։

Օրինական աղգականութիւնն, այսինքն է որդեգրութենէ յառաջ եկած աղգականութիւնն ալ ոչն ցուցակով կը համրուի, ղի հաշուի մէջ օրինական որդիութիւնը բնական որդիութեան հաւասար է, բայց եւ եղած ըլլալուն համար խորթութեան տեղ կ'անցնի։

Այս յօդուածը, ինչպէս ըսինք, միայն ճիւղահամարը, այսինքն պարզ համրելը կամ աղգականութեան ամուսնան դանելը դիւրացնելու համար գրեցինք. և ոչ թէ արդելքի կանոնները բացատրելու համար։

Մ. Ե. Օ.

ՍԱՂՄՈՍ

Աստուածաշունչ Գրոց մէջ գտնուած երբայական բանաստեղծութեանց այդ հաւաքածոյն միակն է իւր տեսակին մէջ՝ իբրեւ կրօնական արարողութեանց սահմանեալ երգեր, որ կը բարացուցէ մեզ Իսրայելացւոց մտքի կարողութեան մակարդակն և ըմբռնմանց դրականութիւնն։ — Ամենէն աւելի հետաքրքրական է տեսնել թէ քնարերգակն Դաւիթ երբ կ'յորինէր զայնս, աշխարհակալ թագաւորի մը տաղանդին հետ միացնելով նաեւ քերթողական արուեստի գերազանց հանճար։

մը, Հրեայք տակաւին չէին կրցած իրենց նախա դաշարումները թօթափել բոլորովին, թէեւ իրենց համար ընդհանուր տիեզերաց միակ արարիչն էր Աստուած։ — Եւ տակաւին այդ արարչին անձնաւորութիւնն իրենց համար մարդկային բան մ'ունէր։ Աստուած կ'այցելէ Աբրահամու իւր երկու ընկերներով, և կ'խօսակցի Նահապետին և նորա կնոջ Սառայի հետ, Նա կ'ստեղծէ զմարդն ի հողոյ, Ինքն կ'պատրաստէ Եդեմը, և Ինքն կ'դոցէ Նոյեան տապանին դուռը։ Կ'ախորժի այն ողջակէզին հոտէն զոր Նոյ կ'մատուցանէ նմա, կուտայ Մովսէսի տասնաբանեայ պատուիրաններն, քանդակելով զայնս քարէ տախտակներու վրայ։ Մերթ որոտման մէջ կ'տեսնուի նա, մերթ ամպերու միջոցաւ կ'յայտնէ իւր ներկայութիւնն, և նոյն իսկ կ'ընչէ, կ'աղաղակէ, կ'ծիծաղի, կ'ննջէ և կ'զարթնու։ Բայց անհնար է ամբողջ հին կտակարանի և մասնաւորապէս Մարգարէութեանց մէջ գտնուած այսօրինակ բացատրութիւններն իրենց իրական վիճակին մէջ ընդունիլ, վասնզի Մարգարէ+ որք տարբեր դասակարգ մը կ'կազմէին ժողովրդէն, իբրեւ Աստուծոյ կողմանէ առաքուած պաշտօնեայներ, կ'ջանային զգալի օրինակներու միջոցաւ ժողովրդեան հաղորդել աստուածային հրամաններն, թանձրամիտ ժողովուրդը դիւրամէտ կարենալ ընելու համար այդ հրամանաց գործադրութեան։

Անշուշտ նոյն այդ դաղափարներով առլցեալ կ'երգէր Դաւիթ իւր պաղատագիրքերգութիւնն՝ որ է իւր սաղմոսներն, որք մասամբ պատահական պարագայից բերմամբ յօրինուած են ընդհանրապէս, և յորս զգայուն հեղինակն սփոփիչ դարման մը կ'տեսնէր իւր խռովեալ հոգւոյն։ Դաւիթի հոգեկան այդ ներքին տագնապն յառաջ կուգար ի նմա մերթ անձնական մեղաց ինքնաբերաբար ճանաչումէն, և մերթ ընդ մերթ թշնամեաց յարձակումներէն, և այդ պատճառաւ հարկ կ'տեսնէր ի սրտէ ապաշաւ մ'ուղղել իւր Արարչին և այդ յարձակմանց դիմադրել և յաղթելու համար աստուածային օգնութիւնը խնդրել։ — Այդ կրկին առիթներով կ'յաջողէր Դաւիթ գերազանցապէս փառաւորել իւր Աստուածը, որ ի պատիւ Տաճար մը կանգնելու դաղափարն եւս յղացաւ։ Ապաքէն կրցաւ նա հնարաւոր ազդեցիկ շէջտերն տալ իւր խօսից,

որք ապաշխարող սրտի մը խոստովանութիւնն լինելէ զատ՝ Աստուծմէ ներումն և թողութիւն կ՚հայցեն, միևնոյն ժամանակ աստուածային փառաբանութեամբ համեմելով զայնս, որ դերադոյն ապացոյցն կ՚համարէր նա բնութեան զարմանալի երևոյթներն։ —Մերթ իրաւունք ունենալ կ՚կարծէր իւր բաղմաթիւ մեղաց մէջ երկնային շնորհաց արժանանալու, հին յիշատակներ զարթուցանելով ի միտս, ըստ որում այն որ խոստացած էր լինել Աստուած Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ, չպիտի ուզեր երեսէ ձգել զինքն իւր մեղաց պատճառաւ, և չպիտի դադրեր իւր ժողովուրդն խնամելէ, քանի որ այդ նախահարց միակ սերունդէ էր նա։ Եւ այսպէս պանծալի քաջալերութիւն մը կ՚զգար իւր ներսիդին, մտածելով մանաւանդ որ Աստուած միշտ իւրն էր և ինքն աստուծոյ։

Այսու ամենայնիւ այդ հոգեշունչ քերթուածոց միակ նիւթն է «Աստուած և մարդն հանդէպ Աստուծոյ»։ Մին կը փայլի ի նոսա իւր մեծութեամբ, և միւսն իւր տկարութեամբ, Նա իւր բարութեամբ և սա իւր թշուառութեամբ; Նա իւր ողորմածութեամբ և սա իւր անհաւատարմութեամբ, Նա իւր արդարութեամբ և սա իւր կարօտութեամբ։ — Այդ զգլուխներն Դաւիթ ի դիր կ՚առնու իւր ազգին յատուկ բանաստեղծական ոճով, նկատելով կարծես թէ՝ եթէ բանաստեղծութիւնը աստուածոց լեզուն է, ինչպէս կ՚ըսէին հինք, ոչինչ ընդհատ նաեւ ազգէն մնմունջներն, որ ընդ Աստուծոյ խօսակից լինելու լեզուն կ՚յօրինեն, բանաստեղծութիւն մ՚են, կամ լաւ եւս է ըսել՝ պէտք է լինին։ — Բայց սասի. պարզապէս իբրեւ մեղանչական մարդ ընդհանուր նկարագիր մը կուտայ Նա իւր սաղմոսներուն, որք ստուգիւ կ՚պատչաճին ամէն անհատի։ Սաղմոսաց այդ նկարագիրն թերեւս ամենէն աւելի բանաւոր պատճառ մը եղաւ պի յետոյ ապա Հրէից Սինակոգային մէջ իբրեւ կրօնական երգեր ծառայեցին անոնք։ Նոցա այդ ընդհանուր նկարագիրն ամենուրեք կ՚տեսնուի արդէն, վասնզի Դաւիթ ոչ թէ միայն իւր անուամբ, այլ յանուն բովանդակ մարդկութեան կ՚խօսի, ինչպէս կը տեսնուի իւր հետեւեալ տողերէն, որոնք կ՚հոչակէ իւր տարած յաղթանակն Գողիաթի վրայ։

«Տէ՛ր , ո՞վ է մարդ , զի յայտնեցար նմա .
Կամ որդի մարդոյ թէ համարիս ինչ զնա ,
Մարդ նանրութեան նմանեաց .
Եւ աւուրք նորա որպէս հովանի անցին»։
(Սաղմ . ճԽԳ . 3—4 .) (Բղդ . Սաղմ . Ը . 4—5)։

Սաղմոսաց այդ միւնոյն ընդհանուր նկարագիրն կարեւոր առաւելութիւն մ'է նոցա արժէքին համար ; որով գրական տամամբ հնդկական վեհաներէն աւելի գերազանց բանաստեղծութիւն մը կ'ներկայանան մեզ։ Եւ քրիստոնեայ նախնական եկեղեցին եւս նորա այդ տեսակ մը գիւրամատչելի հանգամանքներէն . հրապուրուելով , չ'վարանեցաւ ի կիր առնուլ զայն առօրեայ սովորական աղօթից մէջ ; ո՛չ այնքան նորա ըմբռնման որչափ ոգւոյն զհետ երթալով . վասնզի տուգիւ կ'պատչաճէր նա ապաշխարող հաւատացելոց հոգւոյն զոհացում տալու նպատակին , և այսպէս սաղմոսերգո-Ներ-ն քրիստոնէական եկեղեցւոյ մէջ մուտ գտաւ ի վաղուց , և եկեղեցական պաշտամանց կարեւոր մի մասն կազմեց անտի և այսր։ —Բնական էր զի մեր Հնագոյն եկեղեցին եւս ընդհանուր եկեղեցւոյ օրինակին հետեւելով՝ կանուխ ժամանակաւ Սաղմոսերգութեան համար կարեւոր տեղ մը պիտի բանար իւր աղօթարարողութեանց մէջ , մանաւանդ այն միջոցներուն յորս տակաւին շարականներ ըստ բաւականի հեղինակուած չէին առ մեզ , զոր օրինակ մինչեւ Ե . դարն։ Եւ թէպէտ հետագայ դարուց մէջ շարականաց յաճախութեամբ սաղմոսաց միօրինակ ընթերցումներն յապաւուեցան տակաւ յեկեղեցւոջ , եկեղեցական արարողութիւններն դիւրալուր ընելու համար ժողովրդեան , բայց նախնական եկեղեցիէն խսպառ չ'հեռանալու նպատակաւ Սաղմոսերգութեան կարեւոր մաս մը պահուեցաւ ի նմա և կ'պահուի ցարդ։

Աստանօր ի դէպ է յաւելուլ թէ Սաղմոսաց հայերէն Ներգ-ման-Ներ-ման ժամանակի խնդիրն ինչպէս և ալ լինի , սա ստոյգ է թէ այդ երգերն բաց ի խորհրդաւոր բացատրութիւններէ , ունին նաեւ բաւական խրթնաբանութիւններ , մանաւանդ մեր Ներգ-ման-Ներ-ման , որ յոյժ մթին է ըստ ինքեան։ —Այս պարագայն կ'զգացնէ մեզ Սաղմոսաց լուսամիտ մեկնութեան մը պէտքն , դիտակից սաղմոսերգութիւն-

մը կատարելու համար յեկեղեցւոջ, վասնզի կ'զգանք անշուշտ թէ բաղում ուրեք կ'պակսին առ մեզ այդ օրինակ կարեւոր ծանօթութիւնք ի մասին։

Այդ կարեւոր պէտքն ամէն ժամանակի մէջ տեսնուած է առ մեզ, և յայտնի պատմութենէ կ'տեսնենք որ ԺԲ. դարու մէջ Սկեւռայ կամ Սաղրուի վանուց վանականք՝ ըստ Գրիգորի Սկեւռացւոյ՝ կ'խնդրեն Ն. Լամբրոնացի դիտնական վարդապետէն «զբացատրութիւն զաստուածիմաստ հոգեբղխոյն նուագ, որ միշտ յեկեղեցւոջ սրբում աննուազ ձայնիւ պաշտի որպէսզի մի՝ անբանարար, ասեն, սաղմոսերգութիւնն ի մէնջ լինիցի» (Սոփ. ԺԵ. 34)։ Եւ ստուգիւ ուր չ'կայ գիտակից և երկիւղած երգեցողութիւն, անդ չ'կայ նաեւ ջերմեռանդութիւն և բարեպաշտութիւն։

ՍՄԲԱՏ. Վ.

ԱՌԱՔԵԱԼՆԵՐ

Հասարակ Գալիլեացիներու խումբ մը։— Քրիստոս ինքն ալ Գալիլեացի էր՝ Նազարէթէն. տեղ մը՝ ուսկից կարելի չէր որ, ըստ հրէից, «քարւոք» բան մ'ելլեր։ Քրիստոս հարուածեց ա՛յդ նախապաշարումը, և իր դաւառին զանազան կէտերէն՝— Բեթսայիդա, Կափառնաում, Կանա — Տիբերական ծովեզերքի քաղաքներէն ընտրեց իր բարեկամները՝ բովանդակ աշխարհի նախապաշարումը հարուածելու համար։ Իսկարիովտացին միայն Գալիլեացի չէ՛ր, ա՛յն ալ շուտ վերցաւ մէջտեղէն։ Իսկ Պօղոս՝ Կիլիկեցի՝ Տարսոն քաղաքէն, յառաջ բոլորովին օտար էր ա՛յս խումբին և անոր հաւատիչը։ Յետոյ Ջերմապէս միացաւ անոր և գրեթէ

գործին ղեկը իւր ձեռքն առաւ։ Արհեստով պարզ խոբանակար մը, բայց Հիլէլեան Դպրոցի աշակերտ՝ իբր փարիսեցի։

* * *

Աննշա՜ն մարդիկ. չէին գիտեր որ տիեզերական կրօնի մը բախտը իրենց ձեռքը յանձնուած էր։ Հազիւ երեք դրիւ ալիւրի ղանգուած մ'էին, որուն մէջ, սակայն, դրուած էր լաւագոյն խմորը։

Խեղճ ձկնորսնե՛ր. անշուշտ չէին ալ մտածեր թէ մեծ մեծ անձնաւորութիւններ պիտ՝ ըլլային։— Իրենց գործունէութեան շրջանակը՝ Տիբերական ծովակին ծիրն էր. իրենց կեանքը ծովակին վրայ, իրենց ապրուստը ծովակին մէջ. ծովակ մը ձկնաւէտ։

Արեւը այդ ծովակէն կ'բարձրանար առտուն՝ նետնետ ճառագայթներով և ատոր կապոյտ ալեակներուն մէջ կ'մխրճուէր երեկոյին՝ բռնկած գունտի մը պէս։ Ա՛յդ էր իրենց համար աշխարհի հորիզոնը։ Ցերեկուան տապը յոգնեցուցիչ էր և գիշերը՝ երբ խաղաղ էր ծովակն ու երկինք իւր աստղերով ցանուած ատոր վրայ՝ հազիւ մրափ մը կ'թուլցնէր անոնց աչերը նաւակներուն մէջ, կամ ծովափի աւազներուն վրայ երկնցած պիշ պիշ գիտելով երկինքը՝ կ'մոռնային օրուան խոնջանքը։

* * *

Հեռի՛ Երուսաղէմի խլացուցիչ ժխորէն. անոնց համար չէ՛ր Օրինականներուն մաղաղմները, Փարիսեցիներուն երկար երկար քղանցները, լայն դրապանակները։ Ասոնք չէին հետաքրքրեր Գալիլեացի ձկնորսները։ Անոնց միտքը լլկուած չէր մեկնութիւններու խճողումով. ո՛չ ալ ողջակէզի սեղանին ճենճերումը հաճոյք կ'ազդէր անոնց՝ ո՛րչափ քահանաներուն։ Անոնք Իսրայէլի Աստուածը կը պաշտէին և Անոր անուամբ հռչակուած օրէնքին հպատակ՝ կ'կատարէին իրենց կրօնական պարտքերը ա՛յնչափ պարզ, ո՛րչափ իրենց ձկնորսի պարզ զբաղումները։

Այս չարքաշ կեանքն ու պինդ կազմուածքը՝ միամիտ ոգիներ, կոյս մտքեր, աղնիւ սրտեր կ'պարփակէին։ Սողոմոնեան սրահներէն որոտացող պատգամներ անոնց ուշադրութիւնը չէին գրաւած երբեք. բայց օր մը՝ ծովակի եզերքին վրայ ձայն մը գրաւեց զանոնք. ձայն մը անուշ, թափանցիկ։ Ուռկաններ նետած՝ առատ որսի մը կ'սպասէին անհամբեր. ա՛յնտեղէն Մէկը կ'անցնէր և հեղինակի շեշտով մը կ'ըսէր անոնց. «Եկայք զկնի իմ, և արարից զձեզ որսորդս մարդկան» (Մատթ. Դ. 19)։— Հետեւեցան Յիսուսի։

* * *

Հետեւեցան Յիսուսի.— Ո՛չ գիրք ունէին, ո՛չ օրինագիրք. ամեն ինչ Քրիստոս կ'ուսուցանէր անոնց։ Ջեղծումներ դիտել կուտար և ուղիղը կ'ցուցնէր. առակ մը կ'ըսէր բարձր մտածումներ թելադրելու համար. կ'գործէր անձամբ. իւր կեանքով կ'շինէր անոնց կեանքը. կը թափանցէր անոնց հոգիին խորը. Ինքն էր անոնց հայն ալ։— Ահա՛ Քրիստոսի կրթելու բոլոր միջոցները ու դրութիւնը։

Առաքեալներն Փարիսեցիներու դպրոցներն չէին յաճախած, և իրենց շինած գաղափարը իրենց պապերու կրօնի նկատմամբ ա՛յնքան պատահական և ա՛յնքան արտաքին էր որ՝ անմիջապէս յափշտակուեցան կարծես նոր գաղափարներէն։— Նախ՝ ինքն Յիսուս որսաց զանոնք։

Եղբայրներ էին. մեծ ու պզտիկ չկար անոնց մէջ, թէև Քրիստոսի աչքն ու ձախը գրաւելու դաղտնի տենչն ունեցողներ ալ եղան. թոյլ չտրուեցաւ սակայն։ Ա՛յդ վայրկեանէն կազմուեցաւ խումբը. Քրիստոս բացաւ անոնց միտքը. թէև ո՛չ քիչ աշխատութեամբ։

* * *

Զարնուած հովուի մը ոչխարներու նման ամենքն ալ ցրուած պիտ՝ ըլլային Գեթսեմանիի մութ գիշեր-

ուան մէջ՝ եթէ անոնց սիրան ու միտքը շաղուած չըլլային Յիսուսի սիրով։ Մարդկային տեսեղծ տկարութիւնը վարանքով պատեց ա՛յդ բարի ձկնորսները մինչև վերնատան հրաշքը։ Պենտեկոստէի համախմբութիւնը վերկեց զիրենք։ Պատրաստութեան մեծ օրն էր այդ՝ Սուրբ Հոգին ընդունելու համար. և ահա՛ հոգեկան կորով մը, նորոգութիւն մը քաջալերեց զանոնք. վարանքը փարատեցաւ. աշխոյժ մը խօսելու և յորդում մը Քրիստոսի փառքն ու Աւետարանը պատմելու։— Քրիստոս խոստացած էր չթողուլ իւր ընտրածները ու չթողուց։

* * *

Քրիստոս ըսած էր անոնց Պաղեստինէն դուրս ելլել։ Ա՛լ Գալիլիոյ ծովակէն անդին հորիզոններ կ՚տեսնէին։ Անոնց քարոզութեան առաջին խօսքն պիտ՚ըլլար «ողջոյն»ը. մերժումի հանդէպ՝ իրենց ոտքին փոշիները պիտի թօթափէին։ Դուրս ելան Պաղեստինէն. փոխան ճանապարհներու հանդիպեցան. բայց ընդարձակ դործունէութեան մարդիկը գինովցուց զիրենք։

Վէճեր ունեցան իրարու հետ իրենց քարոզութեան եղանակին վրայ. տարակարծիք դտնուեցան իրարու հանդէպ. դործին չվնասեցին սակայն։ Իրենց մէջ դրուած խմբերը կ՚տարածուէր աշխարհ դրիւներու մէջ ալ։ Հռովմի լեկէոնները Պաղեստինը կ՚բռնէին ազմուկով. Պոդոսի Պետրոսի լեդուներն Հռովմը կ՚կախարդէին անշշուկ. — Ընդհանուր տիրապետութիւն մը կար սրտերու վրայ։

* * *

Քրիստոս իրեն համար ըսած էր. «Ես եմ լոյս աշխարհի» (Յով. ԺԲ. 46). աւելին ըսաւ Առաքեալներուն համար, «Դուք էք աղ երկրի . . . դուք էք լոյս աշխարհի» (Մատթ. Ե. 13. 14.)։ Եւ իրաւի մարդի՛կ՝ կան՝ որ աղ են և կա՛ն՝ որ լոյս. կա՛ն մարդի՛կ՝ որ սրատում են և կա՛ն՝ որ սէր։ Այս նկարագիրներու համայնք մը՝ է առաքելախումբը։

Մեր Սրբազան բանաստեղծն՝ Արեւելցին Վարդան՝ կ'ցոլացնէ իւրաքանչիւրին նկարագիրը վարպետ վրձինով. վրձին մը՝ թաթխուած արեւելեան հիացումի և պատկառանքի մէջ։ —

Առաքեալներ «զլխմունք» են «զԹուխթեանց Հօր» անսահման ծովէն. անդրանիկ խորհուրդներ և գերազանց լոյս. երկնատասան ազգերու Ս. Եկեղեցւոյն պսակը։

Պետրոս և Անդրէաս՝ «հիմունք» են «աշխարհակիր բանին» ձեռքովը դրուած. անշարժ լեռներ և ծաղկածին հովիտներ, հաւատքի հարազատ վէմերը։

«Յովհաննէս և Յակոբոս՝ վտակներ են որ կ'ըղխին «ի բարերուն հոգւոյն». տիեզերքի որոտմունք, հրեղէն ցոլմունք, լուսափայլ ասպարեզ, Յիսուսի լանջքին վակասը։

Բարդուղիմէոս և Թադէոս՝ «հայրատունկ» այդպիսի հրեղէն պարիսպներն են ու բարձր աշտարակները. ոսկեղէն բաժակներ և ժիր մատուռներ և Հայ.Եկեղեցւոյն հոգեւոր հայրերը։

Թովմաս և Փիլիպպոս՝ «անմահ արօտք և ջուրք հանգըստեան» են քրիստոսական հօտին համար. հսկող և խաւարահալած հովիւներ։

Յակոբոս Ալփեան և Յուդա Յակոբեան՝ «ի մաքրագործ հոգւոյն ընտրեալ և ձիւնափայլ» անօթ են. աշխարհի իշխաններ և Աւետարանի անհատնում գանձերուն բաշխողները։

Շմաւոն և Մատթիա՝ հաղարապետներն (տնտես) են Երրորդութեան խորհուրդին. բոլոր աշխարհի համար հնչուն վոսկի և Աւետիքի բարբառներ։

Մատթէոս՝ Քրիստոսի խօսքերուն «կանուխ» քարոզիչն է և Աւետարանիչը, երկնութեան երգ մը, ահաւոր հընչում մը, մարդկային ազգի պարծանքը։

Պօղոս՝ ա՛յս աշխարհի վրայէն դեռոյն է «Անճառելի Դրախտին» և Երրորդ Երկնքին. «բարձանց» նկարող մը, «խորոց» բանալին, և հոյր մը «հաւատարած»։

* * *

Ասոնք են Քրիստոսի բարեկամները, Անոր եղբայրները, Անոր սպասաւորները։ «Աներկիւղ» քարոզելու «պատուէր» առած էին, — և հնչեցուցին Աւետարանը ամեն կողմ։ Ցկարնէր էին, — և պատմուեցան, մարդկուեցան ամենէն հրաշալի, ամենէն աստուածային գործին գործիչներն եղան։

Ամենքն ալ կրնային խոստովանիլ Դամասկիոյի Աշակերտին պէս իրենց դոբ-ՐԷ-ՆԸ։ բայց Երկինքը պիտի պատասխանէր, «Չի ղօբ-ՐԷՆ իմ ի դոբ-ՐԷՆ կատարի» (Բ. Կրնթ. ԺԲ. 9.)։

ԲԱՐԴԷՆ Վ.-

ՔԱՂՈԴԱՑՔ

Կրօնները լա՛ւ հասկնալու համար, պէտք է ըլլալ քիչ մը սկեպտիկ. կարեւոր է նաեւ քիչ մ'ալ ունենալ հաւատացեալի երեւակայութիւնը։ Մարդիկ առաջին անգամ իմաստասիրութեան եւ սիրոյ ոգիով մը ծեռնարկեցին կրօնական քննաքանութեան։

Վոլդէռ եւ իրմով ներշնչուած բոլոր ֆրանսացիները գիտնական անկարողութիւն մը ունեցան ա՛յն պատճառաւ միայն որ դժբախտութիւնն ունեցած էին իրենց մանկութեան ատեն զրկուելու միամիտ հաւատի այն ժամերէն, այն յիշատակներէն՝ որոնք կեանքի յառաջացումին եւ խորհող բանականութեան ժխորին մէջ յանկարծ կ'վերարծարծին եւ գերբնական լոյսով մը կ'պայծառացնեն նախնական հոգիին մութ շաւիղները, ուր գիտութիւնը՝ օտարականի մը պէս՝ խարխափելով կ'ընթանայ։ Վա՜յ այն գիտունին՝ որ աստուածեղէն իրաց ծեռք կ'զարնէ առանց ունենալու իր գիտակցութեան խորը՝ իր էութեան անեղծանելի ներքնախաւին մէջ՝ հո՛ն ուր իր նախահարց հոգին կ'նիրհէ՝ անծանօթ սրբարան մը, ուստից մերթ ընդ մերթ բարձրանան խունկի բոյր մը, սաղմոսի տող մը, վշտի կամ ցնծութեան ձիչ մը, զոր տակաւին մանուկ՝ իր հայրերուն ետեւէն արձակած է դէպի երկինք եւ որ զինքը յանկարծական հաղորդութեան մը մէջ կ'դնէ հինաւուրց մարգարէներուն հետ։

Հ. ՏԱՐՄԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Խառն ժողովը չորեքշաբթի օրը ի նիստ գումարեցաւ ի Պատրիարքարան և զբաղեցաւ միայն խաղային խնդիրներով։

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը չկրցաւ նախագահել այդ նիստին, որովհետեւ անձնական ակտուխեան պատճառաւ իր տունը կը մնար։

Թէոթահեան առաջնորդական տեղապահ Տ. Մկրտիչ վարդապետ Ազատեանի, որ Իզմիրի Զէնկիզէր գիւղը կը դտնուի, հրաման ստացաւ ուղղակի իր նոր պաշտօնատեղին ուղեւորելու համար։

Տնտեսական Խորհուրդը ձեռնարկեց հրահանգ մը պատրաստել՝ Պատրիարքարանի հասոյթներու մէկ մասը կանոնաւորելու համար։

— Տնտեսական Խորհուրդը նկատելով որ Դպրոցասէր Տիկնանց ընկերութիւնը դրամական անձուկ վիճակի մէջ կը դտնուի, կարգադրութիւններ ըրաւ որպէս զի կարելի ըլլայ պէտք եղած դրամը հայթայթել՝ վճանդարելու համար նոյն ընկերութեան վարժարանին մատակարարութիւնը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱ. —Լորտերու ժողովը 113 ի դէմ 142 քուէով ընդունեց այն օրինագիծ որ այրիացեալ երիկ մարդիկը կ'արտօնէ ամուսնանալու իրենց հանգուցեալ կնոջ քրոջն հետ։ — Այս օրինագիծ բաղում տարիներէ հետէ ամեն տարի կ'առաջարկուի Խորհրդարանին, և մէկ կամ միւս ժողովոյն կողմէ ընդունուելով, բայց միւսէն չընդունուելով, օրէնքի ոյժ չի ստանար։ Կը մնայ տեսնել թէ այս տարի Երեսփ. ժողովը եւս պիտի ընդունի՞, որպէս զի օրէնք ըլլայ վերջապէս։ Գլխաւորապէս անկլիքան կղերն է որ կ'ընդդիմանայ։ Ազնուականները միշտ ի նպաստ կը քուէարկեն, և այս անգամ ալ Կալլէսի իշխանն, իւր փեսայ Ֆայֆի դուքսն և իւր որդի Եորքի դուքսն ի նպաստ քուէարկեցին։

ՌՈՒՍԻԱ. — Պալթիկի նաւատորմին մէջ այս օրերս կը սկսի շինութիւնը ռուսական ամենամեծ զրահաւորին, որ անգլիական ամենամեծ զրահաւորին չափ խոշոր և հզօր պիտի ըլլայ, 520 ոտք երկայնութեամբ և 14 հազար թոնս տարողութեամբ։

ԻՏԱԼԻԱ. —Կառավարութեան ստացած հեռագրեր կը հաստատեն թէ Հապէշոյ Մենելիք թագաւորը տրամադիր է Իտալացի բոլոր գերիներն ետ տալու 36 միլիոն ֆր. ի փրկանքի մը վճարման փոխարէն։

—Հռոմայ Պապն հրատարակեց «Բրիտանէական Եկեղեցւոյ միութեան» վերաբերեալ շրջաբերականը։

Թարգմանութիւնք Կ. Ս. Իւթիւնեանի

ՁԵՂՁԵԱԼ ԳԻՆԵՐ

	Հատոր	Ղրուշ
Թափառական Հրեայ (Իօժէն Սիւ)	4	50
Ընտանեզուրկ (Էքթօր Մալոյ)	2	12
Կարմիր Մարդոց Երդումը (Բօնսօն տիւ Թերայլ)	2	10
Կրանթ Նաւապետին որդիքը (Ժիւլ Վէրն)	3	15
Հինգ շաբաթ օդապարիկով »	2	12
Ամուսնութիւնք Փարիզի (Լտմոն Ապու)	1	5
Ձիկազակ (Ֆօրթիւնէ տը Պուակօպէ)	1	5
Տիկին Վիլֆերոն որդի (Լէոն տը Թէնսոյ)	1	5
Սկզբունք քաղաքական տնտեսութեան (ժօզէֆ Կառնիէ)	1	3
Պատժ. Օրինագիրք Օսմ. Պետութեան	1	2
Արկածք Միւնխհաւզէն Պարոնի	1	2

Կեդրոնատեղին է ՊԱՂՏԱՏԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ Գուլ-թան Համամ թիւ 14։

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՒԹ. Ճ. ԱԲԱՊԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ հինգշաբթի օրերն կատարած ծրի խորհրդակցութիւնները, յետայսորիկ, տեղի պիտի ունենան ժամը 5 էն մինչեւ 11 ըստ թրքաց։

ՇԱՆԹԱՐԳԵԼ

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԶԱՆԳԱԿ

ԵՒ ՌԻՐԻՇ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ

ԱՆՕՐԻՆԱԿ ԱԺԱՆ

ԸՆՏԻՐ ԱՊՐԱՆՔ, ԽՆԱՄԵԱԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

1890ԻՆ ՀԻՄՆՈՒԱԾ ՏՈՒՆ

Ս. Վ. ԱՃԷՄԵԱՆ ԵՂԲԱՐՔ

ՅԱՆՁՆԱՌՈՒ—ԵԼԵԿՏՐԱԳԷՏՐ. ՀԱՅՔԱՅՔԻԶՔ ՊԵՏՈՒԹԵԱՆ

14 եւ 19, Զիվէր Պէյ խան, 14 եւ 19

Փիւրէքճիլէր — Կալաթա

ՏՈՔԹ. ՇԻՐԻՆԵԱՆ

ԲԺԻՇԿ, ՎԻՐԱԲՈՑԺ ԵՒ ՄԱՆԿԱԲԱՐՁ

Վկայեալ Ֆիլատէլֆիոյ եւ Նիւ Եորքի համալսարաններէն, երեք տարի հիւանդանոցայ մէջ ծառայած, յետ տասն եւ հինգ ամեայ փորձառութեան. իւր բնակութիւնը հաստատած է Բերա, Սագըզ Աղաճ փողոց թիւ 47 տունը, ուր կ'ընդունի հիւանդ ամէն օր ժամը 7-11. երեքշաբթի եւ ուրբաթ օրերը ծրի կը դարմանէ իրեն դիմողները, իսկ շաբաթ օրերը ժամը 7 էն մինչեւ 9 ը կը գանուի Պօլիս Ֆիւչիւքեան եղբարց դեղարանը։ Կը դարմանէ ամեն հիւանդութիւնք, մասնաւորապէս սրտի եւ կուրծքի եւ կը կատարէ ոմեն կարգի վիրահատական գործողութիւնք։

ԱՐՏՕՆԱՏԻՐ

Կ. Ս. ԻՒՔԻՒՃԵԱՆ